«ԳՅՈՒՄՐՈՒ ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԻՎ 2 ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ԵՎ ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N *ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Շ-Կ-ՖՆ*

ք. Երևան «____» մայիսի 2018 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԱՁ Կարեն Սարգսյանը, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.5 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3060510 (Երեք միլիոն վաթսուն հազար հինգ հարյուր տաս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Կարեն Սարգսյան» Ա/Ձ
ք. Երևան Կառավարական տուն 3	ք, Երևան, Գայի 1/106
ՀՎՀՀ՝ 01506515	ՀՎՀՀ՝ 25268814
«Կոնվերս բանկ» ՓԲԸ	«ԷՅԶ-ԷՍ-ԲԻ-ՍԻ Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930031996040100	Հ/Հ 002-269363-001
Աշխատակազմի ղեկավար .....Ա. Գրիգորյան	Ա/Ձ..... Կ. Սարգսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« » մայիսի 2018 թ. կնքված
ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Շ-Կ-ՖՆ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
7	18000000	վերարկու ձմեռային մանկական 2	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Ձմեռային վերարկու տղայի և աղջկա, անջրաթափանց է, պատրաստված է 100% պոլիէստերից: Գույները վառ՝ ըստ պատվիրատուի պահանջի: Վերարկուի ձևը ՝ուղիղ, աստառով: Աստառընույնպես 100% պոլիէստեր: Դիմացի մասում կենտրոնում գտնվում է քամուց պաշտպանող կայծակ-ճարմանդը: Կրծքավանդակի մասում գրպաններ են՝կայծակ-ճարմանդով: Օձիքի մասում գտնվում է գրպանը կնգուղի (կապիշոն) համար:	հատ	8700	261000	30	ք. Գյումրի, Շիրակացի 10	30	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
9	18000000	Տաբատ ջինսե՝ աղջկա 3	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Ջինսե սպորտային ոճի, գրպաններով, կտորը՝ կիսահաստ, բնական թելերի պարունակությունը 30 տոկոսից ոչ պակաս, նախատեսված դպրոցահասակ աղջկների համար, տարբեր գույների ըստ տարիքային խմբերի, նվազագույնը երեք տեսակի:	հատ	4800	177600	37	ք. Գյումրի, Շիրակացի 10	37	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
10	18000000	Տաբատ ջինսե՝ տղայի 4	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Ջինսե սպորտային ոճի, գրպաններով, կտորը՝ կիսահաստ, բնական թելերի պարունակությունը 30 տոկոսից ոչ պակաս, նախատեսված դպրոցահասակ տղաների համար, տարբեր գույների՝ ըստ տարիքային խմբերի, նվազագույը երեք տեսակի:	հատ	4800	230400	48	ք. Գյումրի, Շիրակացի 10	48	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա

11	18000000	սվիտեր բրդյա 2	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Տաք սվիտեր կամ ժակետ,գործվածքը 65% բնական բուրդ և 35% արհեստական, երկարաթև, բնական թելերի գերակշռմամբ, նախատեսված 7-17 տարեկան դպրոցահասակ տղաների և աղջիկների համար, ապրանքը բազմազան Ցանկացած արտադրության, համապատասխան պիտակավորմամբ: Մակնշումը լվանալու, եղանակի և բաղադրության մասին պարտադիր արտադրողի կողմից: Չափսերի, գույնի և ձևի ընտրությունը ըստ պատվիրատուի պահանջի:	հատ	3800	323000	85	ք. Գյումրի, Շիրակացի 10	85	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
20	18000000	Գիշերազգեստ 7-18տ	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	պիժամո տրիկոտաժե,1մք,մակերեսային խտությունը 400 գրամ: երկարաթև վարտիքը երկար փողքերով , ծաղկավոր ,չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Ցանկացած արտադրության , համապատասխան պիտակավորմամբ: Փաթեթավորումը պոլիէթիլենային փաթեթներով, յուրաքանչյուր փաթեթում 1 հատ	հատ	3200	92800	29	ք. Գյումրի, Շիրակացի 10	29	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
22	18000000	Գուլպա մանկական բարակ	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Գուլպա/բամբակյա/-Գործվածքը 100% Բամբակյա, 1 մք մակերեսային խտությունը 240 գրամ: Փաթեթավորումը պոլիէթիլենային թաղանթով փաթեթներով, յուրաքանչյուր փաթեթում 2 զույգ: Գույնի, չափսի և ձևի ընտրությունը պատվիրատուի պահանջով: Ապահովել առնվազն 5 տեսակ:	զույգ	190	57000	300	ք. Գյումրի, Շիրակացի 10	300	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
26	18000000	հողաթափ ամառային 7-18տ	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	հողաթափ ամառային տակացուն և երեսացուն միաձուլված ՝ ցանկացած արտադրության ՝ տղայի և աղջկա , ըստ ռուսական սանդղակի 38-42 չափի , գույնի, չափսերի ընտրությունը պատվիրատոյի ցանկությամբ:	զույգ	990	84150	85	ք. Գյումրի, Շիրակացի 10	85	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
28	18000000	ներքին սպիտակեղեն՝ տղամարդու 1	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Վարտիք, մայկա, Գործվածքը 100% բամբակյա , 1 մք մակերեսային խտությունը 300 գրամ: Պատրաստի արտադրանքի չափսերը 38-52: Փաթեթավորումը պոլիէթիլենային թաղանթով: Չափսերը և գույնը ըստ պատվիրատուի: Ցանկացած արտադրության, համապատասխան պիտակավորմամբ:	լրակազմ	780	140400	180	ք. Գյումրի, Շիրակացի 10	180	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա

29	18000000	ներքին սպիտակեղեն՝ կանացի 1	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Շապիկ,մայկա բրդյա , 1 մք մակերեսային խտությունը 240 գրամ: Վարտիք բամբակյա, 1 մք մակերեսային խտությունը 240 գրամ: միջնամասում կրկնակի ներդիրով, սովորական ռեզինով, երկար գոտկատեղով:Չափսեր՝ ըստ պատվիրատուի: Գույնը ըստ պատվիրատուի: Ցանկացած արտադրության, համապատասխան պիտակավորմամբ: Մակնշումը լվանալու և բաղադրության մասին պարտադիր արտադրողի կողմից: Փաթեթավորումը պոլիէթիլենային թաղանթե փաթեթներով, յուրաքանչյուր փաթեթում 1 լրակազմ:	լրակազմ	820	138580	169	ք. Գյումրի, Շիրակացի 10	169	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
39	18000000	Կոշիկ աշնանային 1	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Կոշիկներ աշնանային , կաշվին փոխարինող որակյալ նյութից, 3-18 տարեկան տղայի և աղջկա, տակացուն ՊՎԽ նյութից , կրկնակի կարված , չափը՝ ըստ ռուսական սանդղակի և մանկական ուղղվածություն ունեցող եվրոպական արտադրության հաստատված կանոնակարգի , յուրաքանչյուր զույգը առանձին արկղներով, պիտակավորված , արկղի վրա կոշիկի չափսի, արտադրող կազմակերպության անվանման առկայությամբ: Գույնի , ձևի և չափսերի ընտրությունը պատվիրատուի ցանկությամբ:	զույգ	4200	357000	85	ք. Գյումրի, Շիրակացի 10	85	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
40	18000000	կոշիկ ձմեռային մանկական 1	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Ձմեռային երկարաճիտ 6-18 տարեկան աղջիկների համար, արտադրված կաշվին փոխարինող որակյալ նյութից: Ներսի կողմը մորթուց , չսահող ներբաներով: Քթամասը կոշտ, տակացուն ՊՎԽ հումքից: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը: Գույնի, ձևի և չափսերի ընտրությունը պատվիրատուի ցանկությամբ:	զույգ	6700	247900	37	ք. Գյումրի, Շիրակացի 10	37	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
41	18000000	կոշիկ ձմեռային մանկական 2	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Ձմեռային առանց ճտքի կոշիկ 6-18 տարեկան տղաների համար, արտադրված կաշվին փոխարինող որակյալ նյութից: Ներսի կողմը, պոլիէստեռ, չսահող ներբաներով: Քթամասը կոշտ, տակացուն ՊՎԽ հումքից: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը: Գույնի, ձևի և չափսերի ընտրությունը պատվիրատուի ցանկությամբ:	զույգ	6700	321600	48	ք. Գյումրի, Շիրակացի 10	48	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա

42	18000000	կոշիկ սպորտային մանկական	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Սպորտային կոշիկ , ցանկացած արտադրության ,կաշվին փեխարինող որակյալ նյութից 7-18 տարեկան տղայի և աղջկա /37-42/ չափի՝ըստ ռուսական սանդղակի ,արկղի վրա արտադրող կազմակերպության անվանման առկայությունը և կոշիկի չափի առկայությունը պարտադիր է , գույնի , ձևի և չափսերի ընտրությունը պատվիրատուի ցանկությամբ:	զույգ	4500	382500	85 *	ք. Գյումրի, Շիրակացի 10	85	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
50	18000000	Սրբիչ՝ երեսի	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Գործվածքը 100% բամբակյա, /խավավոր/: Պատրաստի արտադրանքի չափսերը (90X50): Տարբեր գույների: Ցանկացած արտադրության, համապատասխան պիտակավորմամբ: Փաթեթավորումը պոլիէթիլենային թաղանթով և փաթեթներով, յուրաքանչյուր փաթեթում 1 հատ: Մակնշումը լվանալու, եղանակի և բաղադրության մասին պարտադիր արտադրողի կողմից:	հատ	780	31980	41	ք. Գյումրի, Շիրակացի 10	41	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
57	18000000	Սպորտային հագուստ մանկական 1	ՀՀ, ՌԴ, Չինաստան, Թուրքիա	Սպորտային կոմպլեկտը /աղջկա և տղայի/ բաղկացած է՝սպորտային բաճկոնից և տաբատից: Կտորը 70 % բամբակ,մուգ գույնի : Բաճկոնը շղթայով,երկու կողային գրպաններով: Տաբատի գոտին ռեզինով: Գույնի, ձևի և չափերի ընտրությունը ըստ պատվիրատուի պահանջի:	հատ	5800	214600	37	ք. Գյումրի, Շիրակացի 10	37	Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ պատվիրատուի գնման հայտի հիման վրա
Ընդամենը							**3060510**				

* *մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

** *Գնման ժամանակացույցում նշված են առավելագույն քանակները: Քանակները կարող են փոփոխվել շահառուների թվաքանակի փոփոխությամբ պայմանավորված:*

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » մայիսի 2018 թ. կնքված
ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Շ-Կ-ՖՆ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
7, 9-11, 20, 22, 26, 28-29, 39, 40-42, 50, 57	18000000	Հանդերձանք և անկողնային պարագաներ					**918153**	**1224204**	**1530255**	**1836306**	**2142357**	**2448408**	**2754459**	**3060510**	**3060510**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ